

**ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ԱՏԻՇՅԻ** (Արզնի Մատենի թեմ). — Մբ. Աստուածատուր պտրք.ին հետ Պոլիս երթալուն առթիւ ՌԴԸ (=1649)ին ընդօրինակել և ծաղկել կուտայ Աստուածայունց մը և կը յիշատակէ Ս. Յակոբի վանքին (ՄՁ. Թ. 140): Նոյնին յիշատակարաններէն կը քաղենք հետեւեալը իր մասին. «... յետնեալս ի բանասիրաց Ատիշեցի Խաչատուր վրդպս պատահեցայ յայսմ վայրի, մեծահանդէս քաղաքս Բիւզանդիայ հանդերձ քաջ հուետոր եւ անյաղթ պուետիկոս տ. Աստուածատուր աստուածաբան վրդ. սբ. Երուսաղիմայ երջանիկ հայրապետան տեսեալ Ածաշունչ տուփս այս գեղեցկագեղ ծրեալ միայն սեաւ տառնս... եւ ահա յանգ ելեալ լրացաւ ի մեծ մայրաքաղաքս Կ. Պօլսի, ընդ հովանեաւ սրբոյ Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսին, ի թիւ սեռիս հայկազանի քսաներկու յօբելեանի, ոչ գու լման կատարեալ լի եւ երկրորդիւ հարկ գու ի սմին...: Արդ երեսանկեալ աղաչեմ հանդիպողացդ այսմ հոգևնուազ բուրաստանին յիշել ի ժամ աղօթիցն զիս անարժան զԽաչատուր վրդպս եւ զծնողսն իմ, տէր Բարսեղն եւ Ղիմաթն և զնախնիքն տէր Յակոբն, Խաչատուրն, Գրիգորն և Մաւարդն եւ զհարապատ եղբարքն իմ մահտեսի Յովհաննէսն, Աւետիքն, Յովհաննէսն... յիշեսձիք ի Քս միով ողորմեայիւ ինձ տառապեալ Խաչատուր վրդպիս որ բազում ծախիւք եւ արդեամք հտու գրել եւ ծաղկելով զարդարել զԱծաշունչս ոսկով եւ լաճվարդով. և երանգ երանգ գունով և հտու յիշատակ ի սբ երսգմ ի գունն սբ Յակոբայ, ի յառաջնորդութեան տեառն տէր Աստուածատուր... վրդին...» (Խաչ. Յոց. տետր ԺԳ. էջ 947 50):

**ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ՃԱՆՍՈՒԶԵԱՆ, ՄԱՐԱՇՅԻ.** — Մբ. Ծ. 1814ին աւագանի անուէր Յարութիւն. գրաշար եւ գծագրիչ 1838 ին. Զո. 1851 ին. կնիքը 1851. խոստ. կանանց (1870—85). ՏՀ. (1885—87). կը նորոգէ Ս. Հրեշտակապետի վանքին Տեսչարանը 1855ին. ՏՊ. (1887—89). խոստ. արանց (1889—91). Բ. անգամ խոստ. կանանց (1891—93). Լուսսիսն (1889—95). կը վախճանի 1895 ին:

**ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ՄԱՐԱՇՅԻ.** — Մբ. ՏՓ. ըստ յիշատակարանաց 1749 ին կը վախճանի եւ կը թաղուի Ս. Փրկչի վանքը:

**ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ՄԽԱԼԻՃՅԻ.** — Մբ. ՏԹ. կը վախճանի